ՆԱՄԱԿ ԴՈՒՇԷԹԻՑ

—

Մայիսի 20

Վանայ մեր քաղցած եղբարց և քոյրերի դառը դրութիւնը շարժելով իմ սիրտը, իբրև հարազատ հայ զաւակի, համարձակութիւն և առիթ տուեց ինձ Դուշէթ քաղաքի փողոցներում և տներում ողորմութիւն խնդրել նրանց համար և միայն ժողովեցի, մեծ պասից մինչև այժմ 46 րուբլի 80 կոպէկ. Դուրս գալով սրանից 51 կոպ. փոստայի ծախքը և ուղարկելով ձեզ, յարգոյ խմբագիր, 46 րուբլի 29 կոպ., խնդրեմ, իբրև ազգի «Մշակ», բարեհաճէք հասցնել այս փոքր լուման սովալլուկներին և նուիրատուաց միամտութեան համար նրանց անունները և ազգանունները ձեր պատուական լրագրի մէջ տպէք.

Հայք՝ Նատալիա Տէր-Ազարեանց 2 ր., Նինայ Շաղինեանց 50 կ., Յովհաննէս Ալավերդեանց 1 ր., Ջիմշեր Գօզեանց 2 ր., Արտեմ Մարտիրոսեանց 1 ր., Աղէքսանդր Թաթուլեանց 50 կ., Բագրատ Մարտիրոսեանց 30 կ., Վանօ Եզեկեանց 30 կ., Աղէքսանդր Ղազարեանց 50 կ., օր. Նատալիա Թաթուլեանց 50 կ., Եփեմիա Թաթուլեան 50 կ., Օվսաննա Տէրտէրեանց 1 ր., Կատինկայ Տէր-Յովհաննէսեանց 1 ր., Սօֆիօ Ղարագօզեանց 1 ր., Սալոմէ Տէրտէրեանց 1 ր., Եփեմիա Անդրէասեանց 2 ր., Եկատերինէ Գօզեանց 50 կ., Կեկէլ Ալիխանեանց 50 կ., Կեկէլ Ալավերդեանց 1 ր., Սալոմէ Մարտիրոսեանց 40 կ.․ Վրացիք՝ Նինօ Ղարագօզովիսա 1 ր., Թամար Կվալիեվիսա 1 ր., Սօֆիօ Դավիդօվիսա 50 կ., Նինօ Սավանելիսա 2 ր., Մաշօ Դեկանօզօվիսա 1 ր., Дмитрій Дапкіевъ 30 к., Илья Абашидзе 1 р., Соломонъ Зандукели 1 р., Николай Дидебулидзе 1 р. Михаилъ Дапквіевъ 50 к., Владиміръ Осиповъ 80 к., Василій Абашидзе 1 р., Михаилъ Кобіевъ 1 р.․ Русскіе: Романовъ 3 р., Елена Абашидзе 1 р., Владиміръ Витовичъ 5 р.․ Կաթոլիկներ՝ Սօֆիա Զիգիանի 2 ր., Чиховская 2 р., Греки: Аріадна Ананіо 1 р., և լոտօ խաղացողներ 3 ր. 20 կ.․ Ընդամենը 46 րուբլի 80 կոպ.․

Յարգոյ խմբագիր. Թէպէտ ես ողորմութիւն խնդրելու ժամանակը, դէմ գնելով կանացի ամօթխածութիւնը, դավրիշի և տէրտէրի դեր ընդունեցի, բայց կարողացայ միայն այս փոքր գումարը ժողովել. Առաջին պատճառն այն է, որ թէպէտ Դուշէթում մօտ 100 տուն հայ բնակիչներ կան, բայց սրանք միայն անունով են հայ. հայերէն խօսելը և կարդալը սրանց համար չինաց լեզու է և ինչպէս երևումէ ցուցակից առատ նուիրատուները օտար ազգերից են. Չիմանալով հայերէն, չը ստանալով գոնէ ռուսաց լրագիրներ, խեղճ Դուշէթի հայերը չը գիտէին իրանց եղբարց և քոյրերի դառը դրութիւնը. Երկրորդը, որ տեղւոյս գործակալն ևս Թիֆլիսի կոնսիստորիայի հրամանով սովալլուկների համար ողորմութիւն է ժողովում. Բարեկրօն քահանան էլ մի և նոյն խօսքերն է ասում և քարոզում ժողովրդին, ինչ խօսքերով Երևանի սրբազան Եղիազար եպիսկոպոսն է պատասխանել տիկին Մարգարիտ Խանզատեանցին «Մշակ» լրագրի 66 համարում. Հոգևոր իշխանութիւնը լաւ կանէր, որ մի այլ աշխարհական մարդոց էր յանձնել սովալլուկների համար ողորմութիւն ժողովելը, քան թէ բարեկրօն գործակալին, որովհետև նա զբաղված լինելով իր գրպանովը, աշխատում էր մեծ պասին ժողովրդեանը չը մոռանալ տալ իրանց մեռելներին, 40 պատարագի համար փող ընծայել, դէմ գնելով կիսակենդան սովալլուկներին. Յայտնի բան է, որ հրամայող խոհարարը լաւ թիքէն միշտ իր համար կը պահէ պղնձումը, չը նայելով, որ իր պարոնը պէտք է հիւրերի մօտ կարմրի. Թէպէտ «Արարատ» ամսագիրը իր մածունին թթու չէ ասում, բայց ով փոքր ի շատէ ծանօթ է ազգի անցեալ և ներկայ կեանքին, նա լաւ գիտէ ամեն բանը. Թող անէծք թափին մեր գլխին, բայց մենք դարձեալ կասենք, որ հոգևոր իշխանութիւնը իր դերը չէ կատարում. Յարգոյ խմբագիր, աւելորդ չեմ համարում ասել, որ մի քանի պարոններ սովածների համար ստորագրութիւն խնդրելու ժամանակը հարցրին ինձ, թէ ինչ եղաւ այն փողը, որը որ սրանից երկու տարի առաջ Դուշէթի Տէր-Աղէքսանդր Տէր-Յովհաննէսեանը ժողովեց հայերի համար. Ինձ յայտնի է, որ յիշեալ բարեկրօն քահանան ժողոված գումարը յանձնել է Թիֆլիսի կոնսիստորիային. Այժմ ես եմ համարձակվում հարցնել, թէպէտ գիտեմ պաշտօնական «Արարատ» ամսագիրը իմ հարցմունքն էլ լռութեան կը համարէ, ինչ է արել կոնսիստորը Տէր-Աղէքսանդրի ժողոված գումարը. Ինչով կամ ինչ տեղից իմանանք, որ կոնսիստորն իր տեղն է հասցրել այն գումարը և այնքան, ինչքան տուել է նրան ազգի կոպէկները բարեկրօն քահանան, երբ ոչ մի լրագրում նուիրատուաց անունները և նրանց նուէրքը չեն հրատարակված.

Նատալիա Տէր-Ազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՆՈՒԽՈՒՑ պ. Ս. Յովհաննիսեանց մեզ հաղորդում է, որ սխալ է «Մշակի» մէջ տպված այն լուրը, իբր թէ Գրիգորիս վարդապետ Տէր-Յակոբեանց անճշտութիւններ է ցոյց տուել վիճակապատկան արդիւնքների մէջ և իբր թէ ուսումնարանի անունով հաւաքված փողերը չէ յանձնել հոգաբարձութեանը. Թղթակիցը աւելացնում է, որ Գրիգորիս վարդապետը արդարև ստացել է զանազան քաղաքներից փողեր Եղիշէ առաքեալի «Ուսումնասիրական ընկերութեան» անունով, բայց ոչ թէ ուսումնարանի անունով և յիշեալ փողերը հայր սուրբը պահում էր հոգևոր կառավարութեան գանձարանում և մինչև այժմ չէր յանձնում ընկերութեանը, որովհետև նրա կանոնադրութիւնը տակաւին հաստատված չէր, իսկ այժմ, երբ կանոնադրութիւնը արդէն հաստատված է վեհափառից, հայր սուրբը դիտաւորութիւն ունի յանձնել գումարը ըստ պատկանելոյն.

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են «Մի անյայտ պարոն հաղորդել է «Մշակին» իբր թէ մի երիտասարդ Ա. Մ. փոստատունից վեր է առնում ուրիշներին պատկանող զանազան լրագիրներ, մանաւանդ «Մշակի» թերթեր. Որովհետև Բագուի հասարակութեան մեծամասնութիւնը կարծում է թէ Ա. Մ. ես եմ, վասնորոյ ամեն կասկած փարատելու համար, անհրաժեշտ եմ համարում ասել թէ ես չեմ». Նամակը ստորագրված է Աղէքսանդր Մովսիսեանց.

—

Մեզ հաղորդում են ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ, որ թէ ոստիկանութիւնը և թէ գաւառական բժիշկը ամենևին ուշադրութիւն չեն դարձնում քաղաքի մաքրութեան վրա. Օրինակի համար մի քանի եկեղեցիներին և դպրոցներին կից գտնվում են ըսպանդանոցներ և աղբանոցներ, որոնց մէջ խոզերը ամբողջ օրը թաւալվում են.

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ թղթակիցը ուշադրութիւն է դարձնում Արղութեան օրիորդաց դպրոցի մի անյարմարութեան վրա, այն է որ նա գտնվում է մի և նոյն շինութեան գաւթի մէջ, որտեղ զետեղված է և մի հիւրանոց.

—

Մեզ գրում են որ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ Ամենափրկիչ եկեղեցու գաւթում շուտով կը կառուցվի տղայոց համար մի հոյակապ ուսումնարան, որի շինութիւնը արդէն ձեռնարկված է.

—

ԱՐԴԱՀԱՆԻՑ մեզ գրում են որ նրա գաւառի մէջ յայտնվել է մորեխի մեծ քանակութիւն. Ժողովուրդը եռանդով ջարդում է վնասակար միջատներին.

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ գրում են մեզ հետևեալը. «Տեղիս վաճառականները սաստիկ յուսահատութեան մէջ են առևտուրի անկման պատճառով. Եթէ այսպէս շարունակվի, վաճառականների մեծ մասին սնանկանալու վտանգ է սպառնում».

—

Ստացանք Ալէքսանդրապոլից, պ. Կարապետ Յովհանջանեանից Անի քաղաքի աւերակների վիմագրված նկարը, հետևեալ նամակով. «Ճանաչելով Ալէքսանդր վարդապետ Արարատեանի, հայկաթոլիկների կանոնիկոսի, հայրենասիրական ջերմ զգացմունքը և աչքի առաջն առնելով որ նա է խրախուսել ինձ հետազոտել Բագրատունի թագաւորների վերջին գահի աղետալի բեկորները, ես մրցելով շատ արգելքների դէմ, կատարեցի նրա ազգօգուտ առաջարկութիւնը, վիմագրութեամբ լոյս ընծայելով «Տեսարանք Բագրատունեաց կիսակործան Մայրաքաղաքին Անւոյ» վերնագրով առանձին մեծ թերթ, որ ներկայացնում է Անի քաղաքի այժմեան դրութեան տեսարանը. Իմ աշխատանքս նուիրում եմ Արարատեան վարդապետին».

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են որ Ա. Մովսիսեանցի «Մշակի» հաղորդած տեղեկութիւնները, իբր թէ Բագուի արհեստանոցներում ոչ մի հայ որպէս բանւոր, մեքենագործ և այլն չէ աշխատում, սխալ է. Ընդհակառակն, թղթակիցը յայտնում է որ հայերը այդ տեսակ պաշտօններում բաւական թւով աշխատում են և լաւ ռոճիկներ են ստանում.

—

Երեք օր սրանից առաջ կրկին ուղարկեցինք Կ. Պօլսի սովելոց մասնաժողովին Կարապետ Խալփաեանի ձեռքով 1000 րուբլ յօգուտ Հայաստանի սովատանջների. Ուրեմն ընդամենը մինչև այժմ «Մշակի» խմբագրութիւնը ուղարկել է յօգուտ Հայաստանի սովատանջների 31,000 րուբլ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները:

Ֆրանսիական սենատի անդամ Ժիւլ Սիմօն աշխատում է շրջապատել իրան սենատի անդամների այնպիսի մեծամասնութեամբ, որ այժմեան կառավարութեանը թշնամի լինի: Յայտնի է, որ Ժիւլ Սիմօն այդպիսի փորձ արաւ այն ժամանակ, երբ քննվում էր մինիստր Ֆերրիի օրէնքը կրթութեան մասին և նրան աջողվեցաւ մերժել տալ այդ օրէնքի 7-դ յօդուածը: Ժիւլ Սիմօն մի քանի ժամանակ սրանից առաջ կամենում էր սենատի նախագահ ընտրվել և երբ այդ նրան չաջողվեցաւ, այժմ անցնում է այն ընդդիմադրական կուսակցութեան գլուխը, որ հակառակ է պատգամաւորների ժողովից ընդունված օրէնքին ընդհանուր ամնիստիա շնորհելու մասին:

Երբ ընտրվում էին սենատի մասնաժողովի անդամները այդ օրէնքը քննելու և նրա մասին զեկուցումն տալու համար, մասնաժողովի անդամների մեծ մասը ամնիստիայի հակառակորդները կազմեցին: Մասնաժողովի անդամներից վեցը հակառակ են ամնիստիային, իսկ երեքը հակված են նրա օգտին:

Նշանաւոր է, որ ամնիստիայի այդ վեց հակառակորդները ընտրված են 113 ձայների բազմութեամբ, իսկ նրա կողմնակիցները 103 ձայների: Կարելի է յուսալ, որ օրէնքը ամնիստիայի մասին կընդունվի աննշան ձայների բազմութեամբ, միայն օրէնքը կուղղվի պ. Մարսել Բարտի խմբագրութեամբ, որ իրաւացի կերպով առաջարկում է քաղաքական յանցաւորների թւից հանել նրանց, որոնք հասարակ չարագործներ են և որոնց մասին յայտնի է, թէ նրանք սպանութիւններ և գողութիւններ են արել, հրդեհներ են գցել և այլն: Այս վերջին ենթադրութիւնը մանաւանդ հաւանական է, որովհետև մասնաժողովի անդամների ընտրութեան ժամանակ 23 անստորագիր քուէներ կային, և 30 սենատորներ չէին մասնակցում ընտրութիւններին: Եթէ ֆրանսիական կառավարութիւնը ծարպկութեամբ վարվի, այդ 53 ազատ ձայներից կարող է այնքան կողմնակիցներ գտնել, որ բաւական կը լինի ամնիստիայի օգտին մի մեծամասնութիւն կազմելու համար:

Ժիւլ Սիմօն, ինչպէս երևում է, բոլորովին այլ հետևանքների է սպասում: Այն բաժնի ընտրութիւնների ժամանակ, որին պատկանում է Ժիւլ Սիմօն, հանրապետութեան այդ նախկին առաջին մինիստրը յայտնեց, որ ինքը անպայման ընդդէմ է ամնիստիային, որովհետև այն մարդիկը, որոնց կառավարութիւնը այժմ կամենում է վերադարձնել քաղաքային և քաղաքական իրաւունքները, կատարելապէս «անհաշտ» են: Ժիւլ Սիմօնի կարծիքով ֆրանսիական հասարակութիւնը չէ ցանկանում ամնիստիա: Նա համոզում էր սենատին ապացուցանել «իր գոյութեան անհրաժեշտութիւնը» և մերժել ամնիստիայի օրէնքի նախագիծը, որ առաջարկվեցաւ կառավարութեանից և ընդունվեցաւ պատգամաւորների ժողովից:

Բոլոր այդ ասածները բաւական համոզեցուցիչ են, բայց սենատորները, մանաւանդ հանրապետական կուսակցութեանը պատկանողները գործնական մարդիկ են և կը հասկանան, որ պատգամաւորների ժողովի կամքին նորից ընդդիմանալը, մանաւանդ այնպիսի հարցի պատճառով, ինչպէս ամնիստիան է, նրանց համար վտանգաւոր է: Եթէ Ֆերրիի օրէնքի 7-դ յօդուածի չընդունելը վատ հետևանքներ չունեցաւ սենատի համար, դրա պատճառն այն է, որ Ֆրէյսինէի մինիստրութիւնը միջոց գտաւ առանց այդ յօդուածի էլ աքսորել եզուիտներին: Ամնիստիայի վերաբերութեամբ այդպիսի յուսեր չէ կարելի ունենալ: Կառավարութեանից առաջարկած և պատգամաւորների ժողովից ընդունված օրէնքը ամնիստիայի մասին Ֆրանսիայում մեծ հեղինակութիւն ունի: Եթէ այդ օրէնքը մերժվի, մեղաւորը սենատը կը լինի և այդ դէպքում հարց կը բարձրանայ սենատի գոյութեան օգտակարութեան մասին: Այս վերջին հարցը, ինչպէս յայտնի է, այնպիսի հարցերի թւին է պատկանում, որ պէտք է կոնգրէսի մէջ վճռվի, իսկ կոնգրէս կազմվում է պատգամաւորների ժողովի և սենատի անդամների ընդհանուր ժողովից: Այսպիսի ժողովի մեծամասնութիւնը կարող է պահանջել սենատի ոչնչացնելը, որովհետև նա արգելում է Ֆրանսիական հանրապետութեան պետական գործերի ընթացքին:

Երևի սենատորները կը հասկանան, որ նրանց կոչումը այն չէ, որ սենատը ընդդիմանայ պատգամաւորների ժողովի բոլոր վճիռներին, մանաւանդ եթէ այդ վճիռները կառավարութեան առաջարկութեամբ են ընդունված: Ընդհակառակը սենատը այդ վճիռներին աւելի կշիռ պէտք է տայ, նրանց այնպէս խմբագրելով, որ հանրապետական սկզբունքները չափազանցացրած չը լինեն: Վերև յիշված Մարսել Բարտի կողմից առաջարկած խմբագրութիւնը այդ նպատակին է ծառայում և այդ պատճառով կարելի է յուսալ, որ սենատի մեծամասնութիւնը կը հաստատի այդ օրէնքը և նրանց այնպէս կը փոփոխի, որ չարագործները, մարդասպանները և հրդեհներ գցողները չը վերադառնան Ֆրանսիա, իբրև լիակատար իրաւունքներ ունեցող քաղաքացիներ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 26 յունիսի: Համայնքների ժողովի մէջ Գլադստօն ասեց, որ եթէ Ռուսաստանի և Չինաստանի մէջ պատերազմ կը սկսվի, անգլիական կառավարութիւնը օգուտ կը քաղի Ռուսաստանի առաջարկութենից և կը սկսի նրա հետ բանակցել այն հարցերի մասին, որոնք շօշափում են բրիտանական շահերը չինական ջրերի մէջ:

ԲԷԼԳՐԱԴ, յունիսի: Նօվօ-Բազարի նահանգապետ Հասան կենդանի է և հասաւ այստեղ: Նա վիրաւորված է և բժշկվում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 229 ր., երկրորդ 223 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 37 կ., երրորդ 91 ր. 37 կ., ոսկի 7 ր. 73 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,47 պէնս, ռուսաց 100 րուբլ Բեռլինի վրա 128 մարկ 52 պֆ., Համբուրգի վրա արժէ 218 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 269 ֆր.: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Հայ-լուսաւորչական հոգևոր ճեմարանի կառավարիչ Անդրէաս արքեպիսկոպոս Գրիգորեանցին Բարձրագոյն հրամայված է լինել Ղարաբաղի Հայ-լուսաւորչական թեմի առաջնորդ:

Կ. ՊՕԼԻՍ, 27 յունիսի: Անգլիական դեսպան Գօշեն յայտնեց իր անբաւականութիւնը Բ. Դրան պատասխանի մասին Հայաստանի վերաբերութեամբ: Նա պահանջում է հիմնական վերանորոգութիւններ այդ երկրի համար: Բ. Դուռը արգելեց նպաստներ տալ հայոց սովատանջներին և խափանում է Վանի և Էրզրումի բոլոր հեռագիրները:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ